ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԽԱՉԱՏՈՒՐ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Խաչատուր Պետրոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Խաչատուր Պետրոսյանի (այսուհետ՝ Դիմող) դիմումը (ներկայացուցիչ՝ փաստաբան Ինգա Ավագյան) Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2024 թվականի նոյեմբերի 4-ին, որով Դիմողը խնդրել է.

«(...)

(...) ՀՀ Սահմանադրության 72-րդ, 73-րդ հոդվածներին հակասող ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 4-րդ մասը»:

2. Ներկայացնելով թիվ ԵԱՔԴ/0196/01/17 քրեական գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը նշում է, որ իրեն մեղսագրված արարքը՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 34-268-րդ հոդվածի 3-րդ մասով համապատասխանում է 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 44-396-րդ հոդվածի 3-րդ մասին: Դիմողն ընդգծում է, որ «(...) նախկին և գործող ՀՀ քրեական օրենսգրքերով, առանց իրացնելու նպատակի առանձնապես

խոշոր չափերով թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության համար նախատեսված պատիժների համեմատական վերլուծության հիման վրա, նոր ընդունված քրեական օրենսդրությունը համարվում է պատիժը մեղմացնող, քանի որ նշված արարքի համար որպես պատիժ նախատեսվում է ազատազրկում երկուսից հինգ տարի ժամկետով, մինչդեռ հանցանքը կատարելու պահին գործող օրենքով սահմանված էր ազատազրկում՝ երկուսից վեց տարի ժամկետով»: Հետևաբար՝ ըստ Դիմողի՝ նոր օրենսդրության գործողությունը տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը հանցանք կատարած անձանց վրա:

Դիմողը գտնում է, որ իր նկատմամբ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը լուծելիս վաղեմության ժամկետը ենթակա է հաշվարկման արարքի կատարման պահին գործող՝ միջին ծանրության հանցագործությունների վաղեմության ժամկետի հաշվարկման կանոնով:

Դիմողը պնդում է, որ Վճռաբեկ դատարանը թիվ ԵԱՔԴ/0196/01/17 քրեական գործով 2024 թվականի մայիսի 31-ին կայացրած որոշմամբ շրջանցել է այն, որ գործող ՀՀ քրեական օրենսգրքով կամ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, այդ թվում՝ դրանց անցումային դրույթներով, սահմանված չէ որևէ հոդվածի և սանկցիայի համեմատության իրավունքը, և Վճռաբեկ դատարանը նախկին և գործող ՀՀ քրեական օրենսգրքերի ընդհանուր նորմերի համադրված գնահատման արդյունքում թույլ է տվել նյութական իրավունքի խախտում, այն է՝ կիրառել է ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 4-րդ մասը, որը կիրառելի չէր՝ դրանով իսկ կայացնելով Սահմանադրության 72-րդ և 73-րդ հոդվածներին հակասող որոշում:

3. Ուսումնասիրելով սույն անհատական դիմումը և կից ներկայացված դատական ակտերը, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ ներքոնշյալ հիմքերով և պատճառաբանությամբ.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված* ***նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը,*** *ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում* ***առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:***

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է. «*(…) բոլոր այն դեպքերում, երբ դիմողը,* ***ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (…) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:***

Այս առումով հարկ է փաստել, որ սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են **ոչ թե կոնկրետ գործի փաստական և (կամ) իրավական հանգամանքների գնահատման, վիճարկվող իրավական նորմի տվյալ գործով կիրառման կամ չկիրառման, այլ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության գնահատման հարցեր**:

Այսինքն՝ Սահմանադրական դատարանում քննության առարկա կարող է լինել բացառապես նորմատիվ ակտի համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության և (կամ) դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի սահմանադրականության գնահատումը:

Քննարկվող համատեքստում, հաշվի առնելով Դիմողի ներկայացրած դիրքորոշումները և հիմնավորումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերջինիս կողմից բարձրացվել է այնպիսի հարց, որը **ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը**՝ հետևյալ պատճառաբանությամբ.

գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ սույն անհատական դիմումով Դիմողը, ձևականորեն վիճարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի սահմանադրականությունը, **ըստ էության, բարձրացնում է տվյալ դրույթի կիրառման իրավաչափության հարց**:

Այսպես, Դիմողն իր անհատական դիմումով ներկայացրել է դիրքորոշում առ այն, որ *«(...) ՀՀ Վճռաբեկ դատարանը շրջանցել է այն, որ գործող քրեական օրենսգրքով կամ քրեական դատավարության օրենսգրքով, այդ թվում՝ անցումային դրույթներով սահմանված չէ որևէ հոդվածի և սանկցիայի համեմատության իրավունքը, և ՀՀ Վճռաբեկ դատարանը նախկին և գործող քրեական օրենսգրքերի ընդհանուր նորմերի համադրված գնահատման արդյունքում թույլ է տվել նյութական իրավունքի խախտում, այն է՝ կիրառել է ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 4-րդ մասը, որը կիրառելի չէր, դրանով իսկ կայացնելով ՀՀ Սահմանադրության 72-րդ, 73-րդ հոդվածներին հակասող որոշում»:*

Վերոշարադրյալի հաշվառմամբ, նկատի ունենալով Դիմողի կողմից դիմումում ներկայացված մյուս դիրքորոշումները ևս՝ պարզ է դառնում, որ վերջինիս կողմից **ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի հակասահմանադրականության վերաբերյալ** որպես փաստարկ ներկայացվող դիրքորոշումներն առավելապես վերաբերում են ՀՀ Վճռաբեկ դատարանի **գործողությունների (կայացրած դատական ակտի) իրավաչափությանը,** որը **դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:**

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

«Խաչատուր Պետրոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

19 նոյեմբերի 2024 թվականի
ՍԴԱՈ-178